# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  N 89-Ա**

<<30>> նոյեմբերի 2023 թվականի                    քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ա որոշումը, հաշվի առնելով Արցախից բռնի տեղահանված և Անի համայնքի բնակավայրերում բնակություն հաստատած ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու հրատապ անհրաժեշտությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ծնողողական վճարումների զեղչեր սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 17-ի N 13 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին մասին>> N 39-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշման հավելվածի աղյուսակի 9-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 10-րդ կետ հետևյալ խմբագրությամբ՝

| Հ/հ | Ընտանիքի սոցիալական կարգավիճակը | Ծնողական վճարման զեղչի չափը (%) |
|---|---|---|
| 10. | Արցախից բռնի տեղահանված ընտանիքներից մանկապարտեզ երաժշտական և արվեստի դպրոցներ հաճախելու դեպքում երեխայի ծնողական վճարի զեղչում | 100.0 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ - 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Է. ՈՒՌՈՒՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |
| **Մ. ԵՆՈՔՅԱՆ** | ___________ | ___________ | ___________ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<30>> նոյեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ